

տատէ հեղինակը՝ ինչ որ ինք կը փափաքի որ ճիշտ ըլլայ. և այս սխալները ոչ միայն չի սրբագրեց կալանոս, այլ և ընդարձակեց և բազմացուց:

Գրչագիրը զոր գործածեր եմ, կ'ըսէ կալանոս, կաֆա քաղցէն կու գար, ուր էր Միաբ. եղբարց զլիաւոր ուսումնատեղին, գրուած 1366/ին Պատմական մասը Յովհ. Գոնեցոյն նամակով կը վերջացնէ, յորում ընդարձակօրէն կը պատմէ իր միաբանութեան հիմնարկութիւնը:

Ամփոփեց Հ. ԳԵՌԳ ՈՍԿԵԱՆ

(Շարունակելի)



ԱՐԻԱՀԱՄ ՆԱՀԱՊԵՏ



Հնախօսը և սրբախօսը Աբրահամ նահապետի անուան ներքե շատ խնդիրներ յուզած են: Հետեւելով ֆրիստոնէական թառարանին՝ ավարակ մը տալ կը փափագինք ասոնցմէ մի քանիներուն:

Աբրահամու զոհը. — կը գտնենք նահապետին վրայ պատմուածներէն, ինչպէս իրեն մատուցած իսահակ որդւոյն զոհը, որ բոլորովին խորհրդանշի մ'է Յիսուսի ֆրիստոսի կատարած զոհին: Խննդոց գիրքը կը պատմէ, որ ինչպէս ինքը կը հնազանդի և կը հաւանի Աստուծոյ հրամանին՝ ողջակէզ մատուցանելու իր միակ որդին, և իսահակ կը հնազանդի հօրը և անձամբ կ'ընդգրկէ ողջակիզման փայտը, և միաւրին կ'ելլեն բլրան վրայ: Նոյն և նման Որդին Աստուած մարդանալով կը փափագի ընդունիլ բաժակն, և ինքն է որ խաչափայտն առած ուսոցը վրայ՝ կ'ելլէ զէպի Գողգոթի բլուրը:

Խորհրդանշի մակնութիւնը. — Քրիստոս, նէութեան առաջին զարէն սկսեալ Աբրահամու զոհը մեկնուած է՝ իբրեւ օրինակ Յիսուսի ֆրիստոսի զոհին: Պողոս Առա-

քեալ Եբրայեցոց Թիմոթէ մէջ (ԺԱ. 19) կ'ըսէ. Աբրահամ պատարագ մատոյց իսահակը, և միամօրը կը մատուցանէր. որուն համար ըսուեցաւ թէ իսահակով քեզ զաւակ պիտի կոչուի, միտքը դրաւ թէ կարող է Աստուած մեռեալներուն յարուսիւն տալ. ուստի և օրինակ ընդունեցաւ զայն, այսինքն նա օրինակ եղաւ հանդերձելոյն, որուն հայ թարգմանութիւնը կը ղենէ. «ուստի և յառակս իսկ ընկալաւ զնա», որ թարգմանութիւն է յոյնին «ὅθεν αὐτόν καὶ ἐκ παρθένου ἐκοιμίσαστο»: Եկեղեցւոյ շատ Հայրեր նմանութիւնս շատ անգամներ իրենց գրոց մէջ նշանակեցին: Կը գտնենք ծիսարաններու մէջ ալ յիշատակուած՝ զոհիս նշանակութիւնը, ինչպէս Ս. Կիրեղ աղբթանադասցւոյն և Յակոբիկ Ասորւոյ և այլ պատարագամատոյցներուն մէջ:

Կան յուշարձաններ զոհիս՝ երկրորդ զարէն սկսեալ, ըլլայ ձեռագիրներու մէջ, ըլլայ մանաւանդ գետնադամաններու, գերեզմանաբարերու, եկեղեցւոյ և սրբազան վայրերու որմերու վրայ: Նկարներս կան որ դրուագուած են քարերու վրայ, կամ իրճանկարներ են զանազան ձևերով և խորդանիշներով: Արլի մէջ կը տեսնենք դեռ այժմ եօթնականմարկայալ դամբանի մը վրայ զԱբրահամ՝ ձեռքը սուր և սեղան մը: Լատերանեան թանգարանին մէջ՝ Յուսիոս Թասոսի որմնափակ դամբանին վրայ նոյնը նկարուած է, և այլն: Կան փղոսկրեայ սիւնակ, արծաթ դգալ, ոսկեզօծ բաժակներ, սպակէ ըմպանակներ, կապարեայ ձուլածոներ, կաւէ ամաններ և այլն, որոնց վրայ կան զրուագուած Աբրահամու զոհը, շատերը երկրորդ զարու գործեր:

Յալստուութիւն (Apocalypse) Աբրահամու — Անվաւեր գրուածոց մէջ կը յիշուի Աբրահամու յայտնութեան գիրք մը, ըստ Ս. Իպիփանու յոյժ չար արտադրութիւն մը, որուն հեղինակը կը համարուին Սեթեան աղանդաւորներ, կայ ևս իրեն ընծայուած կտակ մը, որուն երկու յոյն քնագիր օրինակներ հրատարակուած են,

փափագողը կրնան Հարնաքի այս մասին գրութիւնները աչքէ անցնել: Կայ և այլ կտակ մը Աբրահամու, Իսահակայ և Յակորայ՝ որուն արարքերէն թարգմանութիւնն ալ կը գտնուի:

Սուրբ Գրքին մէջ կը գտնենք տեղեր՝ ուր Աստուած կը կոչուի սոսկ Աստուած Աբրահամու, ինչպէս նաև Աստուած Աբրահամու, Իսահակայ և Յակորայ:

Ձայս կը գտնենք լատին, մոզարապ, յոյն, և այլ արեւելեան ազգաց Մաշտոցներուն մէջ: Դիտելու արժանի է, որ երգմեցուցման, խնդրուածոց, մկրտութեան աղօթից մէջ ևս՝ արեւմտեան եկեղեցւոյ ծիսարանաց մէջ զործածուած է Աստուածն Աբրահամու. ահա օրինակ մը Գեղասեան ծիսարանէն. «Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ, Աստուած «Յակորայ, որ հրամայեցեր ցղիւն Իսրաէլի և զԳուշան փրկեցեր ի սուտ եղև» Բաննէն. զքեզ աղաչեմ, զի զերծուցես «և զայս զաղախին քո և առաջնորդեսցես «զսա ի շնորհս մկրտութեան քո»: Մոզարապեանը ունի ասոր նման. «Տէր Աստուած հօրն մերոյ Աբրահամու և Աստուած Իսահակայ, որ ասացեր զի բարին «արասցես մեզ, փրկես զմեզ ի ձեռաց «անօրէնութեան մերոյ» , և այլն: Ընդհանրապէս արեւելեան ծիսարանները կը գործածեն Մաշտոցի մէջ թաղման հանդիսաւորութեանց միջոց, մաղթելով ջրխտոնեայ հոգւոյն՝ որ հանգչի ի զոգն Աբրահամու:

Անյիշատակ ժամանակէ նահապետիս ընծայուած է եկեղեցւոյ մէջ՝ իրեն մասնաւոր պաշտամունք մը: Դեռ եօթներորդ դարուն կար Երուսաղէմ Գողգոթայի եկեղեցւոյն մէջ Աբրահամու սեղանը, որուն վրայ ուղեց զոհել զԻսահակ, և Մեղքի սեղեկինը՝ ուր մատոյց իր պատարագը: Սիւլիա չորրորդ դարուն կ'ըսէ, որ Քարբի մէջ կը գտնուէր Ս. Աբրահամու նուիրուած եկեղեցի մը: Եւսեբիոս և Սոզոմենոս կը պատմեն, որ Մամբրէի ձորը կ'երթային Աբրահամու ուխտի համար՝ հրեայք, ջրխտոնեայք և հեթանոսք: Իններորդ դարուն Լատին եկեղեցւոյ մէջ կը յիշուի

իւր տօնը վկայարանութեանց մէջ Հոկտեմբեր իննին. նոյնպէս արեւելեան եկեղեցիները կը տօնէին Սուրբ Նախարարց հետ նաև զԱբրահամ, ինչպէս կը գտնենք ինքն տօնացոյցներուն մէջ ալ: Դպտի եկեղեցին կը տօնախմբէ սեպտեմբեր 21ին և օգոստոս 18ին, իսկ ասորականը Յունուար 20ին:

Ո. Կ.



ԼԵՃՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ՇԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՏ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ա. Էմիւսի 1621)

(Շար. տես Բզմ. 1922. էջ 179)



10. ԳՈՐՆ

Եւ ասէ. «Հեծիր, որդեակ Դերէն, ինչի՞ ցունես»: Եւ ասէ Դերէնն ցնայր իւր. Լուր, իշխան, զարմացեալ եմ թէ... (էջ 63):

Պատասխանէն կ'երևի որ ցուն (կամ թերեւ իգուն, եթէ կարդանք Ինչ իգուն) կը նշանակէ «զարմացած, շփոթուած, ապշած»: Կայ և պրս. گنگ gung «համար», որ կրնայ նոյնպէս յարմարել տեղին:

11. Ղարապսցի

Եւ մտեալ ի (յ)արքունիս իւր... զարհուրեցաւ և կանչեալ ահեղ՝ մինչև ամենայն զարպասցիքն զարհուրեցան (էջ 32): Կը նշանակէ «պալատական, զարպասին մէջ բնակողները»:

12. Ղերի

Ու հայր նորա Սահակ կոչեաց մանկան անունն Դերէն, որ կոչի որդի վանաց (էջ 38): Ասոր հետ հմտ. Թովմա Արծր.